

լարի ղինուորը, միշտ խոնարհամիտ, որ կամ պաշտօնական զիրք առած իւր վերայ եղած պարտքն էր կատարում զգաստութեամբ. կամ անհոգ կերպով ամբոխի մէջ զրօսնում:

Ինչպէս բոլոր Տաճկական քաղաքների խանութպանները, նոյնպէս և Վարսինը սովորութիւն ունին իւրեանց ծանօթ յաճախորդին զահուէ առաջարկելու. այդ սովորութիւնը ունին և Ալէքսանդրապօլցիք, որոնցից բաւական թուով Վարսում կան. ուղեկիցներս՝ որ կարող էին հրապարակի մէջ ազատ մանդալու, շատ գանգատում էին իրանց առաջարկուած այնքան զահուէներից. խեղճերը իրանց պատմութեան նայելով՝ հանգուցեալ Քարրիէլ Եպիսկոպոսի թարգմանած Արիւստի առակի «Թաթուլին գալաճօշ»-ի եւս չէր օրն էին ընկել:

(Ծ-Դ-Ն-Դ-Է-Է):

Յ. Վ. Մ.

ԱԶԳԱՅԻՆ ՏՕՆԱԽԱՐԱԹԻՒՆ Ի ՓԱՐԻԶ

Յուլի 14 օր 1789—1882 թ.

Այս երրորդ տարի է. ինչ որ Յուլիսի 14 օրը պատգամաւորների պալատից «Ազգային տօնախմբութիւն» սահմանուած հրատարակուեցաւ. Ամբողջ Ֆրանսիա այնպէս է զուարճանում այս օրով, ինչպէս մեր մէջ մանուկները զատկական օրով, և գրեթէ ամսով առաջ պատրաստուում են նորան զիմաւորելու. Եւ արդարեւ հասարակութեան հարկաւոր են այսպիսի խրախոյս և զրօսանք, որովհետեւ նա իւր ամենօրեայ վիշտ և տրտմութիւնը երբեմն երբեմն պիտի փարատէ գոնէ այսպիսի տօնախմբութիւններով. Ամեն ժամանակի պալատականներն և արքունի ծառայողները քաջ հասկանալով հասարակութեան վշտալի զրութիւնը, որչափ կարողութիւն կնեւէր, աշխատումէին բաւականացնել նորա այս պահանջը. Պալատականները հաստատ մնալով այն կարծեաց վրա թէ՛ ինչ որ կտաս, այն քո է, ինչ որ չես տալ, այն կորած է, ծախս էին անում բաւականին գումարների, մէկ կողմից հասարակութեան սիրտը շահելու և նորան թուլացնելու համար, իսկ միւս կողմից նորանից փառք որսալու համար. մէկ խօսքով պալատականների գլխաւոր աշխատութիւնն էր և այժմ ևս է ամեն տեղ գանձեր բաժանել և հացկերոյթներ պատրաստել. Հոգովի վերջին թագաւորները այս մասին այնպէս չափազանցեցին և հասարակութիւնը այնպիսի անբարոյականութեան ընտելացրին, որ այս վերջինը միշտ պահանջումէր (Paris et civicensis), այսինքն է հաց և զրօսանք, Ֆրանսիայի այժմեան վարչութիւնը հասկանալով տօնախմբութիւնների այսպիսի դժբ. թէև համաձայնեցաւ

նորա գոյութեան վրայ, բայց ոչ սակաւ ստոնասրտութեամբ: Այս խնդիրը պարզելու համար հարկաւոր է յիշել Յուլիսի 14 աւուր տօնախմբութեան գլխաւոր աղբիւրը—1789 թ. այսինքն է այն օրը, երբ Փարիզի հասարակութիւնը քանդեց Բաստիլիա կոչուած բանտի ահագին ամրոցը, և այս գործով նա սկսեց և առաջ տարաւ այնպիսի մի մեծ յեղափոխութիւն (революция), որ տեւում է մինչև ցայսօր: Աւելորդ է երկար խօսիլ այստեղ այս յեղափոխութեան վրայ, այլ կ'ամենուամբ նշեն իսկ 1789 թ. Յուլիսի 14 աւուր մասին մի քանի խօսք ասել Ֆրանսիայի ազգային տօնախմբութիւնը հասկացնելու համար:

Ամեն կոչումից ընտրուած պատգամաւորներ Մայիս ամսին ժողովուեցան Վէրսալ քաղաքին մէջ (Փարիզից 15 վերստ հեռաւորութեամբ), ուր գտանուում էր Լուզովիկոս XVI. թագաւորը, և այնտեղ այլ և այլ կողմանց վերաբերութեամբ երկար վիճարանութիւն և տրտունջ սկսուեցաւ: Թագաւորի և բարձր կոչումն ունեցողների (ազնուականների և հոգեւորականների) հակառակութիւնը «երրորդ կոչումն ունեցողների դէմ» (Tiers — état) ձայնի հաւասարութեան և արքունի զգրծերի միասին որոշելու վերաբերութեամբ, շարժեց Փարիզը և առիթ տուաւ կասկածելու և խորհրդածելու, որ եթէ այսպիսի հասարակ գործի մէջ չեն համաձայնուում, արդեօք, ի՞նչպէս պիտի կարգաւորեն այլ աւելի հարկաւոր և ծանր գործերը, ուստի ինքնին կ'ամեցաւ ձեռնարկել մի այնպիսի գործի, որով կ'արելի լինէր «երրորդ կոչումն» բարոյապէս զօրացնել և նորան ժամանակի պահանջման կատարի վրայ կանգնեցնել, — այս Բաստիլիայի նուաճելն էր, որ ես այժմ պիտի պատմեմ, հիմնելով մեծ յեղափոխութեան նշանաւոր պատմագիր Միշլէի խօսքերի վրայ:

«Վէրսալը թէև կարգաւորուած էր վարչութեամբ, թագաւորով, նախարարներով և զօրքով, բայց այնտեղ սա հասարակ երկրայութիւն, տարակուսութիւն և անհամարձակութիւն էր տիրում, ուստի բարոյապէս ընկած էր անտէրութեան մէջ»:

«Փարիզը թէև վերականգնած, բայց վարչութիւնից իրր անկարգ համարուած և զանց արած, Յուլիսի 14 ին հասաւ այն կէտին, որ բարոյապէս նշանակումէ վսեմ կանոնաւորութիւն, որ է միաբանութիւն:

«Փարիզը 13 ին իւր ազատութեան համար խորհեց, իսկ 14 ին յարձակուեցաւ իւր վարչութիւնը զլորելու»:

«Առաւօտու լուսանալուն պէս մի խորհուրդ ծնուեցաւ, ամենքը տեսան մի լոյս, որ ամենի միտքը լուսաւորեց, և մի ձայն ասումէր ամենին «վեր կ'աց և Բաստիլիա նուաճիր»: Այս թէպէտ անկարելի էր և միանգամայն ցնորք և երեւակայութիւն . . . բայց ամենքը հաւատ ընծայելով այն ձայնին՝ խօսքը իրօք կատարուեցաւ . . . ուրեմն Բաստիլիայի վրայ յարձակուելը բոլորովին խելքի և հնարքի գործ չէ եղել, այլ միաբանութեան գործ: Փողոցների, գետի ափերի, կամուրջների և զբօսա-

բանների վրայ ժողովուած մի բազմութիւն ձայն էր տալիս միւս բազմութեան.— Բաստիլիայի վրայ, կարծես թէ՛ թմբուէն ևս նշոյն արձագանքն էր հնչում.— Բաստիլիայի վրայ, Միշլէն ասումէ, որ ծերունի մարդիկը, որոնք ականատես են եղել այն օրին, և այնուհետև ևս իրենց հայրենեաց շատ նշանաւոր օրեր են տեսել, խոստովանում են՝ որ նորա այնպիսի միաբանութեան օր երբէք չեն տեսել. ասումէ, այն օրը ամբողջ հասարակութեան օրն էր. ուրեմն, շարունակումէ նա, այս մեծ օրը պիտի մնայ մարդկային սերունդի համար յաւիտեան տօնելի, ոչ միայն նորա համար, որ այն օրը նորա ազատութեան անդրանիկ օրն էր, այլ և նորա համար, որ այս գերօրինակ միաբանութեան օր էր, Միշլէն առաջարկումէ հարց.— ո՞վ թելադրեց հասարակութեանը, ո՞ր տնօրէնութիւնը շարժեց նորանց Բաստիլիան առնելու, և ինքն է պատասխանում.— Անցեալն և ապագայն երկուքն ի միասին տալիս էին նորան այս խրատը.— վեր կաց, միւսնայնը կրկնումէր և այն, որ ապագայից անկախ է և անցեալից անխախտելի.— իրաւունք, Իսկ արգարութեան անմահ զգացմունքը բաղխումէին ստրկութեան շղթաներով կաշկանդած մարդկային սիրտը և ասումէին.— վեր կաց, մի վախենար, ինչ որ և կը պատահի քեզ, — մահ թէ յաջողութիւն, ես քեզ հետ եմ ։

Բաստիլիան հասարակութեան համար չէր, ուրեմն զարմանալի է, նա ի՞նչու պիտի վերաբերուէր դէպի նորան ռիսկալութեամբ. բայց չէ. նա մտաւոր զարգացման և առողջ դատողութեան բանտ էր, ուր բանտարկումէին վստահ և համարձակ գրողը և կամ անբաղդացած բարձր կոչումն ունեցող անձն, և ինչպէս ասումէ Միշլէ, այնտեղ « յամօթ Պրանսիայի » բանտարկուած էր մի այնպիսի անձն ևս որ Պրանսիայի ծովային վարչութեան մի գաղտնի խորհուրդ էր տուել, որ վերաբերումէր հասարակութեան օգտին. վարչութիւնը երկնչելով թէ՛ գուցէ նա այն խորհուրդը ուրիշներին ևս հաղորդէ, կալանաւորեցին նորան Բաստիլիայի մէջ, Հասարակութեան արդարադատութիւնը և բարեսրտութիւնը չէր հարցաքննում այն, թէ բանտի մէջ արդեօք իւր ազգակա՞նն էր, թէ օտա՞ր ո՞մն, այլ նա զգումէր, որ նորա մէջ փտումէին շատ արդար մարդիկ, ուստի նա ասումէր Բաստիլիան, Հասարակութիւնը ոտքի կանգնեցաւ, բայց չունէր պատերազմական գործիք, ուստի դէպի տկար— ծերունի զինուորորդի (invalides) բնակարանը դիմեց, ուր յոյս ունէր գործիք գտնելու. Այնտեղ հանգիպեցաւ ծերունի, բայց քաջասիրտ Սամբրիէլ բերդի կառավարիչը, որ այս հասարակ խօսքով փոքր ինչ հասարակութեանը կանգնեցրուց, « Արդարեւ ես ունիմ գործիքներ, որոնք ինձ յանձնուած են իրրեւ պահեստ, բայց զինուորական աշնութիւնը չէ թողլատրում ինձ պարտազանց գտանուելու », բայց հասարակութեան միջից դուրս գալով մի մարդ՝ ասաց, թէ « գործիքները կ'պատկանին հասարակութեանը, և նա կարող է գործադրել նորանց հարկաւոր միջոցում » . այս խօսքի վրայ հասարակութիւնը զըրգմամբ

մոտ և գուրս բերեց 28,000 հրացաններ և 20 թնդանօթներ և Բաստիլայի վրայ դիմեց:

Այժմ նկարագրենք թէ ի՞նչ էր ներկայացնում Բաստիլիան: Փոքր գաւիթը պարսպած ութ հատ ահագին աշտարակներով, որոնք կցուած էին միմեանց հետ սրբատաշ քարերից շինած բարձր պատերով,—աւելի նմանումէր ջրհորի յատակի քան թէ գաւթի: Շինութիւնը դէպի այս գաւիթը չուներ ո՛չ մի լուսամուտ: Նորա շուրջը փորած էր ընդարձակ և խոր փոս, որից անկարելի էր քայլով անցնել, եթէ ո՛չ ելեւիջական կամ շարժական կամրջի միջոցով: Գարձեալ գաւիթ, երկաթեայ դուռն, փորուածք և կամուրջ. բերդապահները շատ չէին, այլ 32 Շվեյցարիացիք և 82 ծերունի զինւորներ, բայց աշտարակներից ուժեղագոյնը և Փարիզի բոլոր հասարակութիւնը կոտորելու համար բերդի այսպիսի ամրութեան հետ՝ այսքանը ևս բաւական էին: Բաստիլիայի նկարագրութիւնը վերջացնելու համար՝ մի քանի խօսք ևս կասեմ նորա ներքին կազմակերպութեան վերաբերմամբ: Դէպի գաւիթը նայումէր մի ժամացոյց, որը բռնումէին երկու շղթայակապ կալանաւորներ՝ իւր թէ՛ ասումէ Գիշէ, կամենումէին կաշկանդել ժամը և նորա ընթացքը առաւել ծանրացնել կալանաւորների համար: Բաստիլիայի տնօրէնն էր Դէ—լօնէ (De Launey): Այս սեւերես և անամօթ մարդը չէր բաւականանում իւր ոռճկով (60,000 ֆրանկով), այլ նա օգուտ էր քաղում նաև կալանաւորների երբեմն վառելիքի տոկից և երբեմն սնունդից. նա վարձով տուաւ և այն այգիին, որ սահմանուած էր կալանաւորների զբօսանքի համար, և այսպիսով նորանց լուսից և օդից զրկեց:

Հասարակութիւնը Բաստիլիան պաշարեց. Տուրիօ անունով մի մարդ (Thuviot) յանձն առաւ պատգամաւորի պաշտօնը, գնաց Դէ—լօնէի մօտ և ասաց «Հայրենեաց անունով խնդրումեմ ձեզանից թնդանօթները վայր բերել, Բաստիլիան մեզ յանձնել»: Դէ—լօնէն ի հարկէ Բաստիլիայի յանձնելը բացասեց, իսկ թնդանօթների համար ասաց, թէ արդէն վայր բերած են:—Ուրեմն ցոյց տուէք ինձ, երբ նոքա բարձրացան աշտարակի վրայ, Դէ—լօնէ նկատեց, որ Սէնտ—անտուանի թաղից մի ահագին քաղմութիւն շտապումէր դէպի Բաստիլիա. նա վախեցաւ և այս խօսքով դարձաւ դէպի Տուրիօ.—Դուք ի չար դորձագրեցիք ձեր գեսպանութիւնը.—2այնդ կտրիր, ապա թէ ո՛չ կամ դու կգլորուիս վայր կամ ես: Հասարակութիւնը՝ Տուրիօյի Բաստիլիայից դուրս գալուն պէս՝ ահագին զգրգմամբ կամրջի շղթաները իջեցրուց և վրայից անցաւ: Այս միջոցին աշտարակներից ուռւմներ և հրացաններ արձակուեցան: Հասարակութիւնը՝ չնայելով որ շատ մարդիկ կոտորուեցան, այնու ամենայնիւ իւր գործը կատարումէր արիութեամբ: Ծերունի զինւորները ձանձրանալով այնքան անմեղ մարդիկ կոտորելուց՝ յեա քաջուեցան, իսկ Շվեյցարիացիք պատերազմումէին: Բայց այս երկպառակութիւնը երկար չէր կարող տևել: Աւերջապէս Դէ—լօնէ ստիպուեցաւ ամրոցը

յանձնելու հատաղած ամբոխը ներս թափուելով կամենում էր բոլոր հակառակորդներին կոտորել, բայց ամբոխի գլխավորները որչափ հնար էր, աշխատում էին խաղաղութիւն ձգել և զինուորներին և Պէ—լօնէին պատրաստարել, բայց այնու ամենայնիւ մի քանի խեղճ ծերունի զինուորներ կոտորուեցան, իսկ Շվեյցարիացւոց արդէն փախցրել էին, այնպէս որ ամբոխը չէր նշմարել նորանց, Հասարակութեան առաջնորդը Ալբրէլլէսի պէս ուժեղ հուլէն անունով մի մարդ երկար միջոց պատրաստում էր Պէ—լօնէին, բայց վերջը նա ևս չկարողացաւ արժանացնել նորան հատաղած ամբոխի ներողամտութեան. գլխատեցին նորան և գլուխը տեղի վրայ ցցելով՝ շրջեցնում էին Փարիզի մէջ, Միշլէի ի միջի այլոց նկարագրումէ նաև հասարակութեան փափկասրտութեան մի փաստը. «Երբ քարշելով բերում էին Պրինց Վոնբարրէ հին նախարարին դատապարտելու համար, այն միջոցին հասարակութեան մի սիրելի առաջնորդ նշմարեց ատենը բերած Բաստիլիայի ծառայողների երեսխաները և ձայն տուաւ բազմութեան. —Ներեցէք երեսխաններին, ներեցէք»։ Այս խօսքի վրայ հասարակութեան գութը շարժուեցաւ և ներեց նորանց, որոնք արեգակից սևացած իրենց կերպարանքն ու վառօդից մրճոտած ձեռները լուանում էին արտասունքով, Նոյն իսկ օրը Բաստիլիան քանդեցին և նորա քարերով «միաբանութեան հրապարակի վրայ» (Place de la Concorde) կամուրջը շինեցին, որպէս զի այն անիծեալ քարերը հասարակութեան ոտքի կոխան լինին յաւիտեան, Ահա, այս են տօնում Քրանսիացիք Յուլիսի 14ին, Այս օրը վարչութեանը դեռ ևս երկիւղալի է, ըստ որում դեռ ևս շատ է մնացել Քրանսիացւոց ձեռք բերելու այն պահանջներից, որոնք վերականգնած էին այն մեծ յեղափոխութեան ժամանակը, ուրեմն կգայ ժամանակ, որ Յուլիսի 14 օրը բաց ի զուարճութիւնից մի այլ զգացմունք ևս ծնանի... ինչ և իցէ, սկսենք այժմ նկարագրել այս տօնախմբութեան հանդէսը, որին ես ինքս ականատես եմ եղել։

Քրանսիացին սիրում է զուարճութիւն, նա իւր կեանքը բաժանած է ընդ մէջ զուարճութեան և մշակութեան, Վարձեմ ո՛չ մի հասարակութիւն այնպէս չէ զուարճանում տղայամիտ, թեթևամիտ խաղերով ինչպէս Քրանսիացիք, յաճախ կհանդիպէք Սէն—Միշլէի զբօսարանի (бульваръ) մօտ (համալսարանի ուսանողների թաղի մէջ) երիտասարդ մարդոց և կանանց, որոնք ձեռք ձեռքի տուած և կամ կուռնկների պէս երկարութեամբ շարուած, յետինքը առաջ գնացողների հանդերձի ծայրից բռնած՝ երգելով, թռչելով և պարելով վազում են, Ահաւասիկ կանգնեցան բոլորաձև, և կանայքը մէջ տեղ առած՝ խելագարի պէս գոռում են, գոչում են... և կամ դարձեալ երկու երիտասարդ թե թեի տալով և նոցա վրա նստեցնելով մի աղջիկ՝ վազեցնում են փողոցի մէջ տեղ, Ալեւոր մարդիկ գնելով թղթեայ տասն կոպէկանոց սրինգը և գլխարկը ծուռ ծածկելով՝ վեց տարեկան երեխայի պէս են զուարճանում սրինգ

ածելու վրայ . . . մէկ խօսքով Քրանսիացիին տօնախմբութեան ժամանակ շրջումէ առանց նպատակի, վաղվաղումէ առանց մի պատճառի, ուստո՞ւտումէ, գոռումէ, պարումէ կարծես մի որ և է փոխադրելի վերացականութեամբ։ Այս պատճառաւ թէև Քրանսիացւոց անուանումն «թեթեամիտ և անտխուր» բայց նոքա իրենց գործերը շինումն աւելի շատ և աւելի լաւ քան որ և է ուրիշ հասարակութիւնը, որովհետեւ աշխատութեանն օգնումն զուարճութիւն և զրօսանք, իսկ աշխատութիւնը պահանջումէ զրօսանք։ Այսպէս ուրեմն Քրանսիացիք զուարճութեան ձգտման հետ ունենալով նաեւ աշխատասիրութեան ձիրք և հարստութիւն, կարծիք չկայ, որ նոքա որչափ կարելի է, լաւ կզարգարեն իրենց ազգային տօնախմբութիւնը։

Տօնախմբութիւնը սկսուեցաւ նախընթաց օրը, այսինքն Յուլիսի 13ին, Միշլէ պատմագրի արձանը օրհնեցին. այս հանդիսի ժամանակ ներկայ էին շատ երեւելի մարդիկ, նաեւ պատգամաւորներ և լուսաւորութեան նախարար Ֆէրրը, ուր խօսուեցան և ճառեր։

Մի և նոյն օրը օրհնեցին նաեւ «քաղաքային տունը» (Hôtel de Vile), որ այրել էին Առմմունի ժամանակ։ Մի քանի տարի առաջ հոգացին նորա վերանորոգութեան համար, և այժմ վերածնեցաւ նա առաջինից աւելի գեղեցիկ և զարդարուն։ Քաղաքի խորհրդականները իրրեւ կոչնատեարք հրաւիրել էին Աւրոպայի բոլոր մայրաքաղաքների քաղաքագլուխներին, որոնցից ներկայ գտնուեցաւ միայն Բէրլինի քաղաքագլուխը, Բաց ի սոցանից հրաւիրուած էին հասարակապետութեան նախագահը, նախարարները, պատգամաւորները և Աէնատի անդամները։

Ժամի 5ին պիտի այցելէին զինւորական նորահաս զօրականներին, որոնց պիտի տային և զրօշակ։ Այս ուսումնարանի զօրքը կազմուած է նախապատրաստական դասարանի 7—15 տարեկան աշակերտներից. այսպիսի զօրք կազմելը նախ և առաջ հնարեց Փարիզի մի իրաւասու մանուկներին սովորեցնումն զինւորական կրթութիւն և հրացանի գործադրութիւն։ Նորանց բաժանել են զինւորական հանդերձներ, փոքրիկ հրացաններ, թմբուկ, փող, նուագարան ևլն. մանուկները իրենց համար ունին օֆիցէրներ, որոնք շատ լաւ են վարժում։ Փարիզի հասարակութիւնը շատ զմայլուած է իւր նորահաս բանակի վրայ, և արդարեւ նոցա զինւորական վարժութիւնը մի զուարճալի տեսարան է ներկայացնում։ Ինչպէս ասացի, 5 ժամին քաղաքային տան առաջ հրապարակի վրայ այցելեցին այս ուսումնարանի զօրքին, որ բաղկացած էր 800 մանուկներից, և յանձնեցին նորանց զրօշակ, որին զիմաւորեց անթիւ բաղմութիւն ուրախալի ծափահարութեամբ, և ապա քաղաքային տան մէջ ձաշ նպատրաստեցին նորանց համար։ Արեկոյին քաղաքային տունը, հրապարակը և նորա հանդէպ գտնուած ընդարձակ ձողաբարձը գազերով և այլ և այլ գունաւոր ճրագներով լուսաւորեցին։ Քաղաքային տանից «Մարսէլիէզա» օպերայ երգուեցաւ և հրապարակի

վրայ եղած հազարաւոր ձայնաւորների ներգաշնակութեամբ շարունակուեցաւ:

Նրկորդ օրը առաւօտեան 11 ժամին երբ դուրս եկանք տանից, Փարիզը արդէն պատրաստ էր տօնախմբութեան համար. տների վրայ ծածանուումէին զևիկուից՝ գոյն գոյն դրօշակներ. բոլոր լուսամուտներից կախել էին գոյն գոյն լճլճեր և լապտերներ. որքան աւելի հին և նեղ փողոցներ են, նոքա այնքան աւելի զարդարուած էին. երեւի այս տօնը յատուկ նորանց համար է, այսինքն հասարակ աշխատաւորների դասի համար, որ իրենց տները զարդարել էին սրտի ուրախութեամբ և մի առանձին հոգացողութեամբ: Այսպիսի փողոցներում տանից տունը կապկապած էին կանաչ տերեւներով և ճիւղերով զարդարուած պարաններ, որոնց վրայ կախուած էին գոյն գոյն լճլճեր, լապտերներ և երեք-գունի դրօշակներ: Այս ամեն զարդարանքը այնքան շատ էին և այնքան խոտն ի խոտն, որ եթէ վերեւից դիտէինք, մի ծաղկազարդ գաշտավայր կներկայանար մեզ, Բայց երեկոյին աւելի լաւ պատրաստութիւն կար, լուսաւորել էին իրենց թաղը, երգեր էին երգում, պարումէին և հրախաղումէին անում. այսպիսի անսահման ուրախութիւն չէր նշմարուում մեծ փողոցների վրայ, իսկ բարձր կոշումն ունեցողների (բուրժուազ) հարուստ թաղի մէջ բոլորովին լուութիւն էր տիրում, և եթէ այս թաղի զարդը վարչութիւնը չլինի, այս տօնը այստեղ բոլորովին մի հասարակ կերպարանք պիտի ստանար, այնպէս որ ամենեւին պիտի չզանազանուէր հասարակ օրից, մէկ խօսքով բարձր կոշման հասարակութիւնը չէ մասնակցում տօնախմբութեանը: Մէկ եօթնեկից առաջ ամեն տեղ կպցրած էր ապագայ տօնի ծրագիրը, որի գլխաւոր բովանդակութիւնն էր, — 2 ժամին նախագահի արեւութիւն զօրաց՝ Բուլտօնի անտառի մէջ, Յերեկը 1 ժամին թատրոնների և Օպերաների մէջ ձրի ներկայացումներ և ինչ 4 ժամին օգապնացների օգապարիկով ճանապարհորդութիւն: 2որս հատ գնդակ պիտի բարձրացնէին, որոնցից մէկին իս ներկայ գտնուեցայ. արդարեւ նախանձելի տեսարան էր, երբ նա արծուի պէս սլանումէր դէպի վեր, թռչող մարդը վերեւից գլուխ էր տալիս բազմութեանը և ուղարկումէր նորանց մետաքսեայ երկար երկար երեքգունի (կարմիր, կապոյտ և սպիտակ) գօտիներ, որոնք օձի պէս էին գալարում օդի մէջ: Այս գնացի դէպի Սէնա գետը, ուր երեկոյի համար շատ պատրաստութիւններ կային. երկու կողմից քսան—քսան քայլ հեռաւորութեամբ տնկել էին բարձր սիւններ մեծամեծ դրօշներով, իւրաքանչիւր սեան վրայ կպցրած էին մարդաչափ բարձրութեամբ ընդարձակ տախտակներ, որոնցից կախուած էին գոյն գոյն ճրագակալներ. կամուրջները զարդարուած էին դրօշակներով, լապտերներով և ըիւրեղեայ ճրագակալներով: Գիշերը Սէնա գետի վրայ լողումէին գեղեցիկ մակոյկներ նուագարաններով, երգերով և բէսկալեան կրակով: Այս տեղից եւ գէպի Վէնսէնի անտառը դիմեցի, ուր ամենից աւելի

պատրաստութիւն կար, այնտեղ պատրաստութիւնն այսպէս կոչուած Վէնէցիական տօնախմբութեան համար. բազմութիւնը անընդհատ շտապում էր դէպի Վէնսէնը, երեկոյի միջնալուծն պէս եւս հասաւ այնտեղ. հանդէսը դեռ եւս սկսուած չէր, միայն ծառերից կախում էին կարմիր գոյն լծղմից պատրաստած գնդակներ մէջը վառած մոմերով, այսպիսով կարծես թէ ծառերի վրայ զարմանալի մեծամեծ պտուղները գոյացրին: Եւս մօտենալով պատրաստուած տեղին՝ տեսայ արդէն հաւաքուած և կանաչ խոտերի վրայ պարկած բազմութիւն ամբողջ, որ հետ զհետէ բազմանալով՝ այլ ևս անցնելու տեղ չկար, եւ բարձրանալով ոտքի ծայրերի վրայ նկատեցի, որ մեծ և երկար լիճը լուսաւորուած էր մեր հանդէպ բոլորած և (1 վերստ հեռաւորութեան) շարած ապակեայ ճրագակալներով. լճի այն կողմը շինել էին փոքր աշտարակ, որ լուսաւորուելու միջոցին ներկայացոււմ էր հրեղէն աշտարակ: Ամենքը սպասում էին հրախաղութեան, որ սկսուեցաւ 9 ժամին: Արդարեւ այս ամեն պատրաստութիւնները, այսինքն՝ լճի լուսափայլութիւնը, նորա վրայ լողացող դրօշակներով և լապտերներով զարդարուած մակդիկները, գոյն գոյն մեծամեծ փայլուն լապտերներով թանձրացած անտառը, անթիւ բազմութիւնը և վերջապէս այս հրախաղութիւնը շատ գեղեցիկ տեսարան էին ներկայացնում: Ահա լսուեցաւ թնդանօթի բամբիւն, և կարծես ջրի միջից դուրս թռաւ ձուի շափ կրակ, որ պարտաբարի արագութեամբ սլանալով դէպի անհասանելի բարձրութիւնը՝ ծայթուէ և ցօղում է մեզ վրա բաց գոյններից գոյացած հրեղէն անձրեւ, այսինքն՝ երբեմն կապոյտ, երբեմն դեղին, երբեմն բոլորովին սպիտակ և երբեմն միմիանց հետ խառն երեք տեսակ գոյնը: Սորան հետեւ ցօղային հրախաղութիւն. կարծես թէ՛ կրակ է բղխում լճից, ելանում են հրեղէն թանձր ծիւղեր, շարժուում են ծաղկի փունջի պէս, ծօծում են, գալարում են, ապա ծայթում են և հաղարաւոր կայծակներ են արձակում: Սորան ևս հետեւեցան հրեղէն որայք, որոնք անընդհատ բղխում էին, և ապա բաց գոյն ունեցող բէնկալեան կրակը, որ մի անձանօթ լուսով շրջակայ բոլոր տեղերը ներկեց: Հանդէսը տեւեց մի ամբողջ ժամ և ապա վերջացաւ, և բազմութիւնը կրկին դէպի Փարիզ շտապեց, անցնելով ընդարձակ ձողաբարձից, որ լուսաւորուած էր ցերեկի պէս: Այնուհետեւ Փարիզը սկսեց խնջոյքներով, նուազարաններով և պարահանդէսներով զուարճանալ: Եւս գնեցի զանազան նշանաւոր պատկերներ, որոնք զարդարուած էին տերեւներով, դրօշակներով և լապտերներով: Բազդ ունեցայ տեսնել նաեւ հասարակապետութեան պատկերը կարմիր զլխարկով, և այս ազգային մեծ տօնախմբութեան գլխաւոր աշխատաւորների պատկերները և Ամսիլ Դէմուլէնի արձանը, որի կերպարանքը անասման ուրախութիւն է արտայայտում, ձախ ձեռքով բռնում է ատրճանակ և ծառի ճիւղ, աջ ձեռքը դրել է կուրծքի վրայ, իսկ մի ոտքի քայլը պարզել է յառաջ: Աստիքների շրջիւր ընդհատուեցաւ

Տ ժամին և ամբողջը այնուհետև կարողացաւ ազատ շրջել. ոչ մի տեղ ոչ ինչ անկարգութիւն չէ պատահել. Փարիզի հասարակութիւնն այս դիշերը անքուն մնաց, իսկ ես 8 ժամ՝ անընդհատ շրջելուց յետոյ 2 ժամին վերադարձայ դէպի տուն. հասարակութեանը՝ վիճակեցաւ գեղեցիկ աղջիկների հետ պարահանդէսը, իսկ ինձ՝ ոտքերի ուռչելուց անհանգիստ քունը:

Թ. Բ. Բ.

ՄԱՐԿԱՆՍ ԲԱՆԿԱՆԻ ՍԵՐԻԱԼԱՆԵՐ



Մ Ե Ր Ն Ա Խ Ն Ի Ք

ԵՒ

ՆՈՑԱ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԷ.

Ընթերցողս միանգամ հետաքրքիր եղան մեր առաքելաշնորհ սուրբ Հարց և Վարդապետաց զանազան դարերում շարադրած կրօնական և պատմական իմաստից երկերը կարգաւ և ի քննին առնել, և երբեք չդադարեցին ժամանակ առ ժամանակ թէ բանիւ և թէ գրով գրուածով նոցա տրամախոհ լեզուն, ճապուկ ու ճարտար մեծիմաստ խօսքերի միմեանց հետ ունեցած կապակցութիւնը, յստակ ու պարզ սահուն ոճերի գեղեցկութիւնը, կարգ ու կանոնով տողած նշանական բառերի շարամանութիւնը, ընդ նմին սքանչանալով միանգամայն նոցա երկնաձիր հանձարի և մտքի վերայ, Այժմ, ողջամիտ բանասիրի արագ գրչին գրեթէ միշտ ընտիր նիւթ եղան մեր երանելի սուրբ Հարց այս հոգեպատում գրուածքները, բայց թէ ինչ մի տարօրինակ երևոյթ անխափան կապեց նոցա սիրտը մեր փառալուրկ հայրենի չքնաղ որդւոց կենաց յիշատակարանների հետ, մինչ զի գովով ու գովասանքով տանել դնել նոցա հեղինակներին աշխարհիս մեծագործ ու բարեխոհ անձանց կարգը, շատ դիւրին է բացատրել, Մեր նախնի գրուածոց արժանաւորութիւնը չափովումէ այն կետից, որ նոցա հեղինակները ամենայն զգուշութիւն գործ են դրել գրեթէ առանց շաղկարատութեան պատմել մի իր, մի առարկայ թէև ընդարձակ՝ բայց դիւրիմաց ոճով, առանց անտեղի բառադարձութիւններ առանց իմաստից կրկնութիւններ և մանաւանդ առանց ստայօդ պատմութիւններ յառաջ բերելու՝ իւրեանց ճշմարտախօս լեզուից ու գրչից. օրինակ, եթէ մի պատմիչ պատմումէ մի հզօր և հուժկու անձի քաջութիւն, առանց խոտորվելու իրական ճշմարտութիւնից, չէ հանում նորան այն առասպելացրած քաջերի ֆղասը, որոնք կատաղի վագրներ են հալածել. այլ նրա արի և կորովի լինելը ցոյց տալով: